

բերութիւնը, որի համար աւելի դիւրին է, անտես առնելով Աստուածաշունչը, հեղնաբար կրկնել հեթանոս Պիղատոսի հետ. «Ձինչ է ճշմարտութիւն»:

Թարգմ. Մամբրէ վարդապետ



«Չայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէ՛ գնանապարհ Տեսուն եւ ուղիղ արարէ՛ գետիղս
Աստուծոյ մերոյ»:

Հրէաստանն այլ ևս չունէր այն երջանիկ և բարեբաւտիկ օրերն, ինչ որ էր Դաւթի և Սողոմոնի թագաւորութեանց ժամանակ. գրեթէ Սողոմոնի փառաց հետ անդառնալի անցաւ այն երջանկութիւնն և փառաւորութիւնն. երբ նորա մահից յետոյ բաժնուեցաւ թագաւորութիւնն երկուսի, հետզհետէ ժողովրդոց սիրտն էլ բաժնուեցաւ երկուսի. Աստուածային օրէնքը դարձաւ նոցա համար երկրորդական բան, Աստուածային երկիւղն հեռացաւ նոցա սրտից, և նոցա մէջ մուտք գտան հարեան ազգաց կրօնական սովորութիւններն, մոլար և զաղրալի դրոշեալների երկրպագութիւնն, մոռացան այն Աստուծոյն, որ իրենց գերութիւնից և ստըրկութիւնից ազատել էր և պատուաւոր դիրք տուել, այն է թագաւորութիւն, քահանայութիւն, բարերար և կեանք պարգևող օրէնքներ: Այլ ի սկզբանէ ինչպէս էին բիրտ և խստապարանոց, նոյնն էլ մնացին և աւելի վատթարացան նորանոր սովորութիւններով, մանաւանդ երբ օտարի լծի տակ ընկան գերութեան ժամանակ. նոցա վերայ շատ քիչ ազդեցութիւն էին արել Աստուածային օրէնքներն. այդ պատճառաւ գրեթէ միշտ հրապարակ էին գալիս Աստուածային պատգամախօսներ, որոնք աներկիւղ՝ նոցա կատարած չարիքներն և անօրէնութիւններն հրապարակաւ երեսներին տալով, յանդիմանում էին, և փոխարէնը՝ ոչ միայն

հալածանք, այլ և չարաչար դառն տանջանք և սոսկալի մահ կրում: ոչ մի պատգամախօս մարդարէ ազատ չմնաց հալածանքից և դառն տանջանքից, երջանիկ պիտի համարել Մովսէսին ու եղիային, որոնք միայն ազատ մնացին, իսկ հալածանք և վիշտ կրեցին, աւելի քան պակաս, նոյն բիրտ և խստապարանոց ժողովրդից և նոցա իշխաններից:

Սակայն դարձեալ երջանիկ էր Իսրայէլի ազգն, երբ միշտ յայտնւում էին Աստուածային պատգամներն մխիթարական յորդորներով և սպառնալիքներով խօսող մարդարէր, և դորանով ժողովրդոց անապատացած սիրտն մխիթարւում էր: Իսկ երբ այդ դադարեց և կատարուեցաւ Ամօս մարդարէի բերնով յայտնուած Աստուածային պատգամն, թէ «Ահա աւուրք զան, ասէ Տէր, և առաքեցից սով, ոչ սով հացի, և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբան Տեառն»¹⁾, հրապարակն մնաց օրէնսգէտ բաբուններուն և դպիրներուն, որոնք ժողովրդոց առաջնորդում էին ինչպէս իրենք էին ցանկանում, և ոչ ինչպէս օրէնքն էր հրամայում. նոքա աւելի գերադասում էին ծերոց աւանդութիւններն և սովորութիւններն և աւելի պարտադիր անում քան օրէնքներն, և որպէս զի իրենց աւանդութիւնն օրէնքների հետ հաւասար լինի, հաւատացնում էին, որ դոքա մարդարէից անդիր աւանդութիւններն են, որոնք նոյնպէս օրէնք են. իսկ օրէնքներն սկսեցին բացատրել և ուսուցանել այնպէս՝ ինչպէս իրենց ձեռնառու էր և հաճելի, և ոչ ինչպէս Աստուածային պատգամներու բուն ոգին էր պահանջում. նոքա յեղաշրջում էին օրէնքն՝ իրենց շահուց և նպատակին ծառայեցնելով:

Այժմ հասկանալի է, թէ այսպիսի կոյր առաջնորդաց ձեռքով, մի բիրտ և խստապարանոց ժողովրդի մտաւոր և հոգեկան զարգացումն ինչ աստիճանի ընկած կլինէր: Աւելացնենք և սորա վերայ այն երկպառակութիւնն, որ մտել էր հոգևոր բարձր դասակարգի մէջ նորանոր վարդապետութեամբ, միմեանց հակառակ ուղղութեամբ, ինչպէս

1) Ամօս. գլ. Ը. հմբ. 11.

էին փարխեցիք, սաղօւկեցիք, էստե՛նեանք և հերովդ խանութեանք: Թէպէտ աղգայնութեան մէջ միասիրտ և միակամ էին, բայց քանի որ կար այնպիսի երկպառակութիւն և կուրացած էին շահասիրութեան և արատքին կեղծաւորութեան ապականիչ ախտով, բարոյապէս բնկած և ապականուած, հասկանալի է որ ժողովրդաց կեանքի փշացած փառթարութիւնը չուտով պէտք է կորուստ մատնէր և զրկէր նոցա իրենց ունեցած անցեալ փառաց փշրանքներիցն էլ: Ապա ուրեմն ժողովուրդը կամ հրէաստանն ամբողջովին առնուած՝ նման էր անմարդաբնակ, ամայի, ամուլ և խողանացած երկրի և անդառտանի, ուր չկայ ոչ մի բուսականութիւն, երկիրը պարարտացնող ջրի պակասութիւնից, այլ քարքարոտ, փշարեր և մռլեխինդ բոյսերով էր ուռճացած, կենդանարար և դործող ժիր մշակի պակասութեան երեսից:

Այսպիսի ժամանակներում անշուշտ խիստ զարմանալի պիտի լինէր, երբ մի անապատացած, անմշակ, ամայի և ամուլ երկրից ձայն հնչէր՝ արդարութիւն և իրաւունք քարոզելու համար, և երկիրն պարարտացնող զովարար ջրի նման ոռոգանէր մարդկանց ներքին անդառտանի ամայի և ամուլ դաշտերն, կակղացնէր քարացած և կորդացած երկիրը, սրպէս զի ծագկէին ու պտուղ բերէին: Այդ արգէն տեսնում ենք կատարուած, երբ Եսայի մարգարէի բերնով յայտնուած պատգամն, Եղեկիայի թաղաւորութեան ժամանակ, լրումն առաւ իրեն դուշակութիւնից եօթն հարիւր տարի յետոյ, յաւիտենական բանի մարմնառութեան օրերում: Այդ օրերն հրէաստանի համար երջանկութեան և փառաւորութեան օրեր էին, որին սպասում էին աղգերը՝ տեսնելու այն փրկութեան լոյսն և նորա պարգեւած և հաստատուն խաղաղութիւնն, որին սահման չկայ: Մեծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահմանուի¹⁾

Այդ երջանիկ օրերն լուռ և յանկարծ չպիտի լինէին: այլ դսրա համար աղգարարող մի ձայն պիտի հնչէր Իս-

1) Եսայի, գլ. Թ. հմբ. 7.

րայելի ժողովրդի տկանջին, որ սթախուէին, զգտնանային
 և պատրաստուէին ընդունելու այն անսահման խաղաղու-
 թիւնն և նորա պարգևողին, որի իշխանութիւնն մեծ է և
 ազգերի լոյս և փրկութիւն: Այդ հնչող ձայնն խիստ ազդու
 և զօրաւոր էր և լսում էր անապատից, դա ամլորդի Յով-
 հանէս Մկրտիչն էր՝ ծերունի Զաքարիա քահանայի որդին,
 որ իրեն ողջ տարիքն անցուցել էր անապատում՝ մարտիս և
 վայրենի մեղք ուտելով, հանգերձն ուղտի բրդից և մաշկեղէն
 դօտի կապած ժամանակն հասաւ, հրէաստանն երկար ժամա-
 նակ անապատ, ամուլ և ամայի լինելուց պիտի ազատուէր, և
 նորա մէջ նորից խօսուէր Աստուածային կենդանարար պատ-
 դամն և լսուէր արդարութիւն և իրաւունք ճանաչելու ազ-
 դու և զօրեղ ձայնը: Եօթն հարիւր տարի առաջ Եսայի
 մարգարէն հոգւոյ աչօք տեսաւ այն օրերն և լսեց այն
 ազգարարող ձայնն անապատից եկած, և խօսեց այն ժա-
 մանակուայ ժողովրդոց, որոնք նոյնպէս փշացած և ապա-
 կանուած էին բարոյապէս. «Զայն բարբառոյ յանապատի,
 պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, և ուղիղ արա-
 րէք զշաւիղս Աստուծոյ մերոյ: Ամենայն ձորք լցցին, և ա-
 մենայն լեռինք և բլուրք խոնարհեցին, և եղիցին ամենայն
 դժուարինք ի դիւրինս և առապարքն ի դաշտոս: Եւ երևեցցի
 փառք Տեառն, և տեսցեն ամենայն մարմին զփրկութիւն
 Աստուծոյ մերոյ»:

Արդարէի խօսեցած պատգամի սկզբի բառերի մօտին
 եթէ նայենք, կտեսնենք մի շատ տարօրինակ բան՝ «Անա-
 պատի մէջ խօսող ձայն»։ Ուստի յայտնի չէ, որ անապատ
 նշանակում է չոր, ամայի, անմշակ և անմարդաբնակ
 տեղ: Հրէաստանի մէջ ևս կային անմշակ, ամայի լեռնոտ
 դաշտեր և լայնանիստ ձորեր, նման անապատի, այնպէս
 ինչպէս էր անապատն ապառաժ Արարիայի մէջ, նաև Քա-
 նանու և Եփրատի մէջ տեղի երկիրն, այդ տեղ ձմրան և
 դարնան ժամանակ միայն լինում է խոտաւէտ և դալար,
 իսկ ամրան արեգական ջերմութիւնից և տապից այրում
 և ցամաքում էին բոլոր դալարութիւնք: Բայց Յովհաննու
 ընտկած անապատն օոցա նման չէր: Նա Յուդայի երկրի

արեւելեան մասի մէջն էր, Երուսաղէմի մօտ՝ լեռնոտ դաշտավայրեր անապատի նման. հաւանական է, որ անմշակ և ամայի տեղեր շատ ունէր տակաւին, բնակիչներն էին սակաւթիւ և ցանուցիր, ապա ուրեմն իսկապէս պէտք էր անապատ անուանուէր։ Այս սակաւաբնակիչ ամայի և անմշակ ու ամուլ անապատից էր լսուում ձայնը, և այնպէս ազդու և խորհրդաւոր մտքեր յայտնում, ինչպէս արդէն գուշակուած էր և պիտի կատարուէր։ Եսայի մարդարէն խօսել էր ժողովրդոց, որ խօսող ձայնն անապատից պիտի լսուի, և Յովհաննէս Մկրտչի վարած կեանքն ապացուցանում է, որ նա բնակում էր անմարդաբնակ, ամայի, անմշակ և ամուլ անապատում. նորա կերած կերակուրներն էին մարախ և մեղր վայրենի։

Անապատից լսում է խօսող ձայնն, որ աւետում էր փրկութեան օրն Իսրայէլի Սրբոյն ձեռքով։ Այն խօսող ձայնն Յովհաննէս Մկրտչին էր, որ յայտնուեցաւ ազդու և յանդիմանիչ վարդապետութեամբ, նման Եղիայի։ Եսայի մարդարէի ասած անապատն երկու տեսակ պէտք է հասկանալ. մինն իսկական, ուր բնակում էր Յովհաննէս, որ տեղից սկսեց ազդարար ձայն հնչեցնել, և արձագանքն Հրէաստանի ամէն կողմն լսելի եղաւ. միւսն էր բարոյական իմաստով այլաբանութիւն, որ պէտք է անապատ ասելով հասկանալ Իսրայէլի ժողովուրդը կամ Հրէաստան։ Ձայն բարբառոյ յանապատին կամենում է ասել, թէ կգայ ժամանակ, որ Հրէաստանի երկրի անմշակ ամայի և ամուլ անապատների նման՝ նորա մէջ բնակող ժողովրդոց միտքն ևս պիտի լինի ամուլ, չոր, ցամաք, արեգական տապով այրուած և անպտուղ, և հենց այդ ժամանակ մի զօրեղ ձայն պիտի լսուի, թէ «Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ»։

Այժմ ինչպէս պէտք է հասկանանք այս պատուէրն։ Ամէն մարդ գիտէ, որ սովորաբար մի թագաւորի կամ իշխանի այցելութեան ժամանակ տեղական կառավարիչներն ժողովրդոց ստիպումեն մաքրել, հարթել ճանապարհներն, որպէս զի թագաւորն կամ իշխանն եկած ժամանակ

դժուարութեանց չհանդիպի: Բայց Յովհաննու Մկրտչի ազդարար ձայնն այն սովորական ճանապարհներ պատրաստելն չէ, այլ աւելի հեռու է տանում՝ մեզ և ունի աւելի խորիմաստ մտքեր. որովհետեւ նոյն խօսող անապատի ձայնն շարունակում և յայտնում է հետեւանքն, որ ձորերի լցուելովն, լեռների և բլուրների ցածնալովն, պէտք է ամենայն դժուարներն դիւրանան և քարքարոտ տեղերն հարթ ու հաւասար ճանապարհներ դառնան: Եւ այս ամէնից յետոյ ինչ կլինի վերջն. ահա նոյն խօսող ձայնն աւետում է այնպիսի հրաշալի օրերի մօտենալն, որոնց դարերի ընթացքում սպասում էր ողջ մարդկութիւնն, մանաւանդ Իսրայելի ժողովուրդն. «Եւ երեւցին փառք Տեառն և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ». Տիրոջ փառքը պէտք է երեւայ, և ամենայն մարմին պիտի տեսնէ Աստուծոյ փրկութիւնն:

Այս, եկան այն երջանիկ ժամանակի օրերն, երբ պէտք է լրումն և կատարումն առնէին Աստուածային պատգամներն բառ առ բառ և ընդհանուր մարդկային ազգի փրկութեան դուռն բացուէր Հրէաստանից՝ այնտեղից ծագէր փրկութեան լոյս, և երեւար Տիրոջ ամենամեծ փառքն: Հրէաստանի, Յուդայի բաժնի, մի քաղաքում Զաքարիա քահանայի կին Եղիսաբէթն, որ արդէն պառաւած և դադարած էր զաւակ ծնելու վիճակից, ինչպէս և Զաքարիան ծերացած ու երկուսն էլ յոյսները կտրած էին զաւակ ունենալուց՝ լինելով ամուլի սկզբանէ, իբրեւ ամայի, չոր, ցամաք անապատ՝ նման իրենց նախամայր Սարրայի, որին Աստուած Իսահակ զաւակն խոստացաւ տալ իբրեւ աւետեաց որդի. և թէպէտ Սարրան երկմտեց և ծիծաղեց, որի համար կրեց յանդիմանութիւն, կատարուեց արդարեւ ժամանակին այդ խոստումն: Նոյնը պատահեց Զաքարիային. լսելով Գաբրիէլ հրեշտակապետից աւետիքն զաւակ ունենալու համար, զարմացած ասաց նա. ինչպէս դիտենամ այդ բանն, քանի որ ինքս ծերացած եմ և կինս իրեն օրերն անցուցել է. դորա համար և կրեց ժամանակաւոր պատիժ՝ լեզուի պապանձուելովն, մինչև որ կատարուեց իրեն ժամանակին: Վասնզի Աստուծոյ մօտ

անհնարին բան չկայ։ Եւ ահա այն ամուլ անապատ երկրից, այն է ամուլ անուանուած Եղիսարէթի արդանդից, առաջին ձայնն էր՝ վեց ամսեայ յղացեալ մանուկ Յովհաննու խայտալով խաղալն, թէ Ահաւասիկ Տիրոջ մայրն, — երբ ոտքը կոյսն Մարիամ՝ մտաւ իրեն աղգական Եղիսարէթի մօտ, յղացած Հոգւով Սրբով յաւիտենական Բանն Աստուած՝ մարդկութեան Փրկիչն։ Ինքն Եղիսարէթ բացազանչում է ասելով. «Օրհնեալ ես դու կանանց մէջ և օրհնուած է քո որովայնի պտուղն, և այս մեծ շնորհն ինչ տեղից է, որ իմ Տիրոջս մայրն դալիս է ինձ մօտ, երբ քո օղջունի ձայնն ականջիս հասաւ՝ որովայնումս իմ՝ մանուկն աւախանալով խաղաց։ Երանի՜ նորան որ հաւատայ, թէ պիտի կատարուի ինչպէս խօսել է Տէրն»։

Այսպէս ուրեմն Յովհաննու ծնունդն եղաւ Զաքարիայի և Եղիսարէթի ծերացած ժամանակն, որոնք նման էին ամուլ անապատի, բայց Աստուած այն ամուլ անապատին տուաւ զօրութիւն՝ դալար բուսով և ծաղկով զարդարուել և հոտով և համով գեղեցիկ և վայելուչ պտուղ բերել, որ իրեն հոտովն ու համովն շատերին գրաւէ և ուղղութեան հրաւիրէ և շատերի համար առիթ դառնայ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ պատրաստելու։ Ով կարգացել է՝) Ղուկասու աւետարանի մէջ նորա հրաշալի ծննդեան պատմութիւնն, անշուշտ կմտաբերէ Զաքարիային պատահած այն երեոյթն, որ շատերին զարմանք պատճառեց։ Արդէն ինն ամիս անցել էր, երբ Եղիսարէթ ծնաւ արու դաւակ և առիթ եղաւ թէ իրեն և թէ ազգականաց և բարեկամաց խնդութեան, որ Աստուած այցելութիւն արաւ նոցա։ Բայց քիչ ուրախութիւն չպատճառեց նաև Զաքարիայի լեզուի բացուիլն, երբ նա տախտակի վերայ գրեց թէ. «Յովհաննէս է անուն դորա»։ Եղիսարէթն էլ մարդարէաբար նոյն անունով կոչել էր ցանկանում, և վէճի առարկայ էր բարեկամաց մէջ, որին վերջ տուաւ Զաքարիայն, և լեզուն բացուելով այն հրաշալի օրհ-

1) Ղուկաս. 41. Ա. հմբ. 37:

ներդն առաց, «Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում: Եւ յաւրոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով սրբոյ՝ որ յաւիտենից մարդարէք նորա էին»¹⁾ Եւ զառնալով զէպի մանուկն, նորա ապագայ գործունէութեան և մեծ պաշտօնի համար ինչ որ հրեշտակից աւետիս առած էր յայտնեց ներկայ եղբայրներին, որ մինչև այն ժամանակ զազոնիր էր. «Եւ զնա մանուկ, մարդարէ բարձրելոյն կոչեալիւր, զի երթիցես առաջի երեսաց Տեառն սրտբաստեղ զճանապարհս նորա, տալ զիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա ի թողութիւն մեղաց նոցա»²⁾ Անշուշտ այս խօսքերն ամենեցունց վերայ մեծ տպաւորութիւն թողեցին և յոյս ծնեցրին ապագայի համար, որ սկսուով էր այն նորածին մանկան միջոցաւ:

Այստեղ Աստուծոյ առանձին շնորհն է նկատուում, և մինչև անգամ շատերն կարծում էին, որ նա լինի Մեսիայն, մոռանալով Եսայի մարդարէի դուշակութիւնն Մեսիայի ծննդեան համար, որ կուսից պէտք է լինէր և արդէն կատարուած էր և յայտնի էր պառաւած Եղիսաբէթին: Իսկ նա անապատի մէջ խօսող ձայնն էր, որ պէտք էր ժողովրդոց բացառէր այն բռոկերի ծածկուած իմաստն իրեն ժամանակին, որ Եսայի մարդարէն գրել էր, և անշուշտ անապատից պէտք է լսուէր, ինչպէս դուշակուած էր, և ոչ հրէաստանի քաղաքներից: Աստուածային իմաստութիւնն այնպէս տնօրինեց, մանուկն աճեց և զօրացաւ հոգեով և անապատումն էր մինչև Իսրայէլի ժողովրդոց երեւալու օրն. «Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով և էր յանապատի մինչև յօր երեւելոյ նորա Իսրայէլի»³⁾ Այն օրն, երբ Յովհաննէս երեաց Իսրայէլի ժողովրդոց, անշուշտ դարապրելու էր: Շատերն նորա տարօրինակ կեանքն տեսնելով,

1) Ղուկաս. գլ. Ա. հմբ. 68—79:

2) « » » » 76—77:

3) « » » » 80:

որ չէր ուստում և չէր խմում, նորան դիւահար էին անուանում. «Եկն Յովհաննէս Մկրտիչ ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասնն դե գոյ ի նմա»¹⁾ Նա իրեն վարդապետութիւնն, մեկնիչների ենթադրութեան համեմատ, սկսեց փրկչական քսան և իններորդ տարումն: Նորա քարոզութիւնն շատ պարզ էր և լայն իմաստով, ահա առաջին խօսքն. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»²⁾ Թէպէտ նա անապատում էր մեծացել, ժողովրդոց հետ շատ չէր շփուել, բայց առաջին անգամ երբ մտաւ ժողովրդոց մէջ, և նոցա կեանքն ազդեց իւր վերայ՝ հոգին վկայում էր, թէ այդ բարոյապէս ընկած ժողովրդին ինչ է հարկաւոր. ժանաւանդ Աստուածային բանիւ ուղարկուած լինելով քարոզելու, յայտնի էր իրեն՝ ինչ պէտք է գործէ և ինչ պէտք է քարոզէ, այդ ժողովրդոց վերքի վերայ ինչ տեսակ սպեղանի պէտք է դնէ, որ նոքա առողջ լինին հոգւով և մարմնով: Ահա նորա ամենագիւրին բուժիչ սպեղանին էր այս խօսքն. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից», և թէ «Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան»³⁾ Միայն ապաշխարելով բաւական չէ, այլ պէտք է այդ ապաշխարութեան արժանի պտուղ երևայ. պէտք էր հեռանալ այն գործերից, որ ցարդ գործել են, և գործել այն՝ ինչ որ արժանի է արքայութեան որդւոց և առաջնորդոց է դէպի արքայութիւն: Արբահամու որդի լինելով չէ կարող մէկն ազատուել. Աստուած քարերից էլ Արբահամու որդիք կյարուցանէ. տապարն ծառի արմատի մօտն է դրած, ինչ ծառ որ բարի պտուղ չէ բերել, կկտրուի և հրոյ մէջ կձգուի: Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարութեան համար, իսկ որ ինձնից յետոյ գայ, ինձնից աւելի հղօրագոյն է, և ես արժանի չեմ նորա կօշիկն վերառնել, նա կմկրտէ ձեզ Հոգւով Սրբով և հրով. որի հոսելին իրեն ձեռքումն է և կտրէ իրեն կալն, կժողովէ ցորեանն իրեն շտեմարանը և յարդը կայրէ անշէջ հրով:

1) Մատթէոս գլ. ԺԱ. հմբ. 18:

2) » » Գ. հմբ. 2:

3) » » » 8:

Եսայի մարդարէի պատգամներն միտքը բերողն կ'լինէ. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս Նորա». իսկ անապատի մէջ խօսող ձայնն այլ բառերով է նոյն միտքն արտայայտում. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից». Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան» այս համառօտ քարոզութեան միտքն է Տիրոջ համար ժողովուրդ պատրաստել, որով բացատրւում է ճանապարհ պատրաստելուն ներքին իմաստն. Նա աւելացնում է լրացուցիչ միջոցներ ևս, որ աւելի վայելուչ լինի Տիրոջ համար պատրաստած ճանապարհն. «Ամենայն ձորք լցցին և ամենայն լերինք և բլուրք խոնարհեցին». ճանապարհների վերայ եղած բոլոր ձորերը պէտք է լցուին և բոլոր լեռները և բլուրները ցածնան, այլապէս ճանապարհը դառի վայր և խող ու փոթ կ'լինի, և ոչ վայելուչ թագաւոր ընդունելու համար, մանաւանդ որ այս պատրաստութիւնն երկրաւոր թագաւորի համար չէ, այլ երկնաւորին. Նորա պահանջն արտաքին չէ, այլ ներքինն. Նա թագաւոր է մարդոց սրտի և հոգւոյ վրայ, և այդ թագաւորութեան մէջ ապրողն պէտք է լինի ուղիղ, հարթ և հաւասար. Մարգարէի ակնարկն է, թէ մարդկանց սրտի մէջ բուն դրած հպարտութիւնն, ամբարտաւանութիւնն, դոռողութիւնն, ընչասիրութիւնն, որք բարձրացած լեռներուն և բլուրներուն նման են՝ պէտք է ցածնան և անհետանան, և հեղեղներից առաջացած անթիւ ձորերն և ձորակներն լցուին հաւասարութիւն Յիսուսի Աւետարանի առաջ:

(Մնացեալն յաջորդ թիւով).

ԱճԱՆԻԱ Եպիսկոպոս

